

ՀԻՒՍՈՒԹԻՌԻԹԻՒՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Վարանդան իւր լեռնալին մաքուր օդով, բարեխառն կլիմալով, բազմաթիւ լստակ աղբիւրներով և օդը մաքրող անտառներով բաւական առողջարար երկիր է։ Սակայն ժողովուրդի տգիտութեան և բժշկական միջոցների բացակալութեան պատճառով՝ մահացութիւնը հասնում է 11% ։

Հիւանդութիւնների գլխաւոր պատճառն է կեղտոտութիւնը, թէև ալստեղի գիւղերը՝ գոմերը գիւղից մի փոքր ինչ հեռու, առանձին տեղ լինելու պատճառով աւելի մաքուր են, քան թէ Ախալքալաքի, Ախալցխայի և Ազեքսանդրապոլի գիւղերը, սակայն և այնպէս՝ շատ հեռու են մաքուր կոչուելուց։ Տեղի սղութեան պատճառով տները միմեանց կից շինուած լինելով, մինի կտուրը ծառալում է միւսին որպէս բակ և աղբանոց, իսկ վերջինիս ծուխը առատութեամբ լցնում է երկրորդի տունը՝ եթէ միայն գուռը բաց է լինում։ Զարաղաւանների սարսափելի ծուխը, լուսի սաստիկ պակասութիւնը, խոնաւութիւնը և կեղտոտութիւնը քարքարում են վարանդեցու երկաթի առողջութիւնը։ Բարեբազդաբար ալժմ ալլ ևս չեն շինում ալդպիսի բնակարաններ և գիւղերը կամաց կամաց ունենում են երկարկանի, պատուհաններով տներ, որ տաքանում են թիթեղէ վառարաններով։

Հիւանդութիւնների տարածուելու մի ուրիշ պատճառն էլ այն է, որ սուրբ պարտականութիւնն է համարւում անշուշտ ալցելել հիւանդին, այնպէս որ անհնարին է լինում նրան առանձնացնել, որի պատճառով և՝ տարափոխիկ հիւանդութիւնները սաստկութեամբ տարածւում են։

Քանի որ քաղաքը զուրկ է հիւանդանոցից ու բժշկանոցից, ինչ կարող ենք տաել գաւառով մասին։ Միայն կէս տարք առաջ Աղդամում նշանակուեց մի գիւղական բժիշկ և

բացուեց գիւղական դեղատուն ու մի ապաստանարան։ Սակալն այս օգնութիւնը գլխաւորապէս տարածւում է Աղդամի շրջակա թուրք ազգաբնակութեան վրայ, իսկ Վարանդակի հալը դարձեալ մնում է առանց բժշկի և ստիպուած գիմում է սափրիչներին, անդչիներին (չարցրց), տատմալ-ընթիւն, կին «հետքիմներին» և մանաւանդ սուրբ աղբիւրներին, ծառերին, քարերին և «գիր անող» կախարդներին։

Վարանդացու ամենագործածական դեղը «իմնոթունն» է, - սրբի մօտից վերցրած հողը և կամ սուրբ ծառի փթած փոշին, որ զրի մէջ խառնելով ընդունում և կամ քսում է ցաւած տեղը։

Հիւանդութիւնների վերաբերեալ ոչ մի հաւաստի թը-մբը չլինելով՝ կարելի է միայն ասել, որ երեխաների մէջ առաւելապէս տարածուած է ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւնը։ Ֆողովուրդը գեռ ևս լաւ չէ ըմբռնել ծաղիկ կտրելու նշանակութիւնը և թէե տարին մի քանի անգամ ծաղ-լու նպատակով ամենայն երեկոյ մոմեր են վառում, կահատներ շրջում են գիւղերը, սակալն և այնպէս՝ շատ երեխաններ մնում են առանց ծաղիկը կտրելու և զոհ են գը-նում ծնողների տգիտութեան, որոնք, սակալն, նրանց առողջացնելու նպատակով ամենայն երեկոյ մոմեր են վառում, կիրակի պահում (անգործ նստում), միմեանցից հեռու մնում, միս ներս չըերում և ալլ։

Երիտասարդութիւնն էլ վարակուած է վեներական ախ-տերով, բացի նոր-Շէն, Հացի և Կաղաքածի գիւղերից, ինչ-պէս վկայում է գաւառական բժիշկը։

Զափահասների և մանաւանդ հնձուորների մէջ տարած-ուած է տենդ և ջրգողութիւն հիւանդութիւնները։

Քաղաքում կան մի քաղաքի, մի գաւառի, մի զինուորական և երկու մասնաւոր բժիշկներ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԵՂԵՐ

Ականջի վշտոց.

Զուի դեղնուցը քսում են քեչի երեսը և դնում ականջի վրայի,
Աշբացաւ.

Աղջկամօր կաթը կաթեցնում են հիւանդի աչքի մէջ և կարսիր
ներկ քսում կոպերը. Զուի դեղնուցը խառնելով շիբի փոշու հետ,
հարում են մինչն սպիտակելը և բամբակի վրակ քսած դնում աչքին.
Անընուլթիւն.

Խաշխաշի կեղես եփում են և ջուրը խմացնում հիւանդին.

Արինահոսուլթիմ քթից.

Շարմանի կոչուած սանրը քերում են և փոշին քիթը քաշուն.
Այսուսոյց.

Գինձ, գիւլխատնի, էմմանի գիլ ծեծում և դնում են երեսին.
Ասումնացաւ.

Սխտոր կամ խորոված ընկող են դնում ատամի վրայ, Ան մո-
խակ են դնում ատամի տակ, կամ մնխակի իւղի մէջ բամբակ թա-
թախանլով դնում են ատամի տակ, Շիբը ալրում են հին բամբակի
մէջ և փոշիացնելով՝ բամբակով վերցնում և դնում ցաւող ատամի
տակ.

Այրուած մարմին.

Կարաղը քսում են ալրուած տեղը և քաթան-հինդի մանրաց-
նում վրան են դնում. Մօլաբաշի կոչուած բուժի իւղը քսում են ալր-
ուած տեղը. Զուի դեղնուցով խմոր են շինում, կրակի վրակ չորաց-
նում, և առա փոշիացնելով ցանում ալրուած տեղի վրայ.

Բարակացաւ.

Մոշի արմատը քերում, ծեծում, օղի քաշում խմացնում են հի-
ւանդին.

Բերանհարենք,

(Բերանի մէջ լեզուն սպիտակում է և ծածկում սպիտակ բըշ-
տիկներով.)

Շիբմզի մի փոքր կառը ձգում են բերանի մէջ և պտտեցնելով

լեզուի օգնութեամբ, թողնում մի քանի ժամ, ալլ միջոցին բերանի թուքը չպէտք է կու տալ, Եիրևելը ալրում և մանրացնելով խառ-նում են սարու նաբաթիի փոշու հետ, մատով վերցնում և ածում լե-նում են սարու նաբաթիի փոշու հետ, մատով վերցնում և ածում լե-նում դուի վիրաւոր մասերի վրալ, Քացախ են առնում բերանը, Ցառեխ ձկան գլուխը ալրում են և փոշին ցանում լեզուի վրալ

Գլխացաւ.

Քացախ և մանանեխ են քսում, Մէջի մէջ ձու են եփում, դը նոսում հիւանդի գլխին, Ցզրուկներ են կալցնում ճակատից,

Հուծել.

Հուծելու համար վերցնում են սինամաքի (?) կոչուած տերեւ, եփ ածում և ջուրը խմում,

Խաւարսն.

Մուկը ակում, կաբագով շաղախում, դնում են խաւարսնոտ մարմնի վրալ

Խողերայ.

Ճմրթում և կռան մեծ ջղից արիւն են տալիս,
Խլութիմ.

Նաւթի անօթը տաքացնում դնում են ականջին, Երբեմն էլ խոռն կոչուած բուխն են խաշում դնում ականջին,

Կատաղած շան կծած.

Կարսիր լորի և շան մազ են դնում խածած տեղը,
Կողքի ծակոց.

Աղը աղանձում կամ թեփը տաքացնում դնում են կողքին,

Կտրուած մաշկ.

Սարդի ոստախնը ծեծում դնում են կտրած մասի վրալ Շորը ալրում խանձիլը կապում են վրան, Օճառը և սև նաւթը եփում շո-րի վրակ քսելով դնում են կտրածի վրալ Մի քանի տեղերում կըտ-րած մորթու վրակ դնում են սե-եօնջապ

Կապոյտ վէրք.

Չամիչ, անախաթուն, լեղակ, ազրի ճիճուն ծեծում կապում են վէրքի վրակ, կտոռ վէրքից սկսում է ժանր թափուել,

Հազ.

Մանիշակի թէ են խմում, Սերկեիլի կորիզը եփում և ջուրը խմում են, Սալապ կոչուած արմատը չորացնում, աղում և թէվ հետ խաւանում, խմում են,

Հարցուիս.

Թթի տակ չոր են ծխում, թթուի թան են տալիս հիւանդին,
Միզակապութիւն.

Թեփը խաշում դնում են վորին, թեփի տեղ գործ են ածում և
անլուաէ բուրդ, Քարաւուզի արմատը եփում և ջուրը խմացնում են,
Մատնաշումնչ.

Մատնաշումնչը հասցնելու համար խաշած սոխ կամ անալի խը-
մոր են դնում:

Մազոլ.

Շիբի և ազի խառնուրդի ջրով լուանում են, Տաւարի լեղին հի-
նալի, հետ խառնում քսում են,

Մոլոքոր.

Մոլոքորից աղատուելու համար մերկանում են, մի սոկէ դրամ
տրորում ջրի մէջ, և ածելով մարմնի վրաէ վաթաթում կարմիր մե-
տաքսէ սաւանի մէջ,

Ոսկըաքեկ.

Կոտրած մասի վրաէ տախտակ են դնում կապում, մինչն կոտ-
րած մասերի ձուլուիլը,

Ոտների քրտինք.

Աղաջրով կամ շիբաջրով լուանում են,

Վէրք զնդակի.

Գնդակից ստացած վերքի վրաէ գեղնահող են տալիս,

Տաքովթիւն.

Կատուահոռի կոչուած ծառի արմատի կեղեց մաքուր լուանում,
քերում, թանձր եփում հիւանդին խմացնում են,

Ցաւ տուած մկանումք.

Ցաւ տուած մկանունքի վրաէ դնում են ծեծած միտ, Տաք ջը-
րով միշտ լուանում են,

Փայծաղի մեծանալը.

Էցի կաշի են կապում, Սև կաչաղակը կապում են վարծաղին
գրաից,

Փորացաւ.

Տաք աղիւսի վրաէ նաւիք են ածում և դնում վորի վրաւ

Փորկապութիւն.

Փորկապութեան համար խմում են նռան ջուր, զիճ են ուսում.

Օծի թոյն.

Ոչ պահողները կծած տեղը պինդ կապում են, թմրեցնում, լետու պատռում ածելիով վէրքը և միջի թոկնը ծծելով բերանից թափում. Դրանից խոտոէ կոօթն կոչուած բոլսը վրան են տալիս կամ մածում քսում, ժանրը հանւում է և 8 օրից լետոէ հիւանդը առողջանում. Մաճնաթեանը ածում են կոնֆի մէջ և կծած անդամը դընում մէջը.

8. Տէր Յովհաննիսեան.

ՄԱՀ, ԹԱՎՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ.

Ժողովուրդը հաւատում է, թէ մարդու մահուան օրը նախավէս որոշուած և գրուած է ճակատին, որ ոչ մի միջոց չի կարող հեռացնել կամ մօտեցնել ալին. Այդ օրերի հաջիւը պահւում է երկնքում դարսուած կճուճներով, որոնց մէջ իւրաքանչիւր տարի մի կաթիլ ջուր է կաթում: Երբ կճուճը լցում է, օրը լրացած է լինում և մարդը մեռնում է: Միւնոյն ժամանակ ամէն մարդ մի աստղ ունի երկնքում, երբ օրը լրանում է, աստղը ընկնում է և մարդն էլ մեռնում:

Երբ մարդու վախճանը հասնում է, եթէ բարի է՝ բարի, իսկ եթէ չար՝ չար հրեշտակը գալիս է հոգին առնելու: Բարի մարդը շատ հանգստութեամբ, ասելով, ծիծաղելով յանձնում է հոգին հրեշտակին, ստանալով նրանից ծաղկի մի փունջ, իսկ չարը երկար տանջւում է չար հրեշտակի հարուածների տակ: Վերջինս սուրը խրելով հիւանդի կողքը, ամուր սեղմում է բկից, այնպէս որ նա ոչ մի բան չի կարողանում ասել և իւր «սրտինը սրտումն է մնում»: Մեռ-